# Գերմանիա

Այսօր մենք նշում ենք Գերմանիայի վերամիավորման 5-րդ տարեդարձը։ [illegible]

[illegible]

# Գերմանիայի արտաքին քաղաքականությունը միավորումից հինգ տարի անց

Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունը Գերմանիայի վերամիավորման 5-րդ տարեդարձի առթիվ մեզ է տրամադրել իր երկրի արտաքին գործերի նախարար Կլաուս Քինկելի հոդվածը։



[illegible]

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

## Բեռլինը հաղթանակների եւ հակասությունների էպիկենտրոն

Այսօր, երբ լրանում է Գերմանիայի միավորման 5-րդ տարեդարձը, դաշնության մայրաքաղաքը դեռեւս գտնվում է մասնատված վիճակում։ Ներկայումս Բեռլինը բաժանված է ոչ թե արյունախում պատով, այլ շուրջ 3.5 մլն բնակչության, տարբեր մտածելակերպով։ Ինչ խոսք, արտաքնապես ամեն ինչ փոփոխվում է բավականին արագ։ Հանրահայտ Ֆրիդրիխշտրասեի ոչ հեռավոր անցակետի կառույցները հիմնահատակ են արված եւ



փոխարենն արդեն 1995-ի աշնանը [illegible] նույն 66 հազար մ տարածքը կներկայանա վարչական, առեւտրական եւ բնակելի մի խոշոր համալիրի տեսքով։ Ընդհանուր առմամբ ազատ բիզնեսն է այն բնագավառը, որ առաջինն է յուրացրել Բեռլինը եւ ամեն օր տոնում է նորանոր հաղթանակներ։

Մինչդեռ քաղաքի արեւելյան եւ արեւմտյան հատվածների բնակիչները միանգամայն տարբեր կերպ են ընկալում նման ընթացքը. Արեւմտյան Բեռլինի բնակչությունն արդեն կարոտում է «սեփական կղզու» նախկին հանգստությունն ու պարզությունը. Այն մտահոգված է հարկերի բարձրացումներով եւ անհանգստացած տրանսպորտային խցանումներից եւ շինարարական աղմուկից։ Արեւելյան բեռլինցիները, որոնց մեծ մասը նախկինի համեմատ նյութապես ավելի ապահով վիճակում է, բողոքում են աճող գործազրկությունից (որը ներկայումս կազմում է շուրջ 11 տոկոս) եւ բնակարանային վարձերի բարձր գներից։ Սակայն Արեւելյան Բեռլինի բնակիչների «դժվարությունները» նախ եւ առաջ պայմանավորված են միանգամայն անծանոթ հասարակարգին ընտելանալու անխուսափելի գործընթացով։ Նրանց նախկին աշխարհը հիմնովին փլուզված է, իսկ նորին անցնելը բավականին երկարատեւ ընթացք է։ Հին եւ նոր աշխարհայացքների նման բախումները այսօր, ինչ խոսք, բնորոշ են ողջ երկրին եւ այդուհանդերձ միայն Բեռլինում է, որ նկատվում են ընդհարումների ծայրահեղ դրսեւորումներ։ Սոսկ Բեռլինում է անհրաժեշտ միավորել երկու տարբեր մտածելակերպ մեկ ֆեդերալ երկրի սահմաններում, ընդ որում ստեղծելով մեկ միասնական իշխանություն։ Միայն Բեռլինում է հնարավոր արձանագրել նույն երթուղու վրա աշխատող վարորդների միանգամայն տարբեր եկամուտ. «արեւմտյան» վարորդի աշխատավարձը շատ ավելի բարձր է, քան իր «արեւելյան» գործընկերոջը։ Սակայն միայն Բեռլինում կարելի է տեսնել, թե ինչպես ամենատարբեր բնագավառներում կողք կողքի աշխատում են քաղաքի արեւելյան եւ արեւմտյան բնակիչները։ Աշխատանքային շուկան այստեղ անհամեմատ ավելի խայտաբղետ է այլ ֆեդերալ հողերի շուկաների համեմատությամբ։ Արեւմտյան Բեռլինում ներկայումս աշխատանքի են անցել արեւելյան հատվածից ավելի քան 120 հազար քաղաքացի։ Այնուամենայնիվ, ինչպես նկատել է գերմանացի հայտնի բարդ Վոլֆ Բիրմանը. «Մեր հեղափոխությունը համաշխարհային [illegible] էր՝ հեղափոխություն առանց հեղափոխականների։ Սովորաբար Գերմանիայում լինում էր հակառակը՝ աղմկոտ հեղափոխականներ, որոնք ունակ չէին անել հեղափոխություն։ Այն, որ 1989-ի հեղափոխության ընթացքում չլսվեց ոչ մի կրակոց, արդեն ինչ որ բան ասում է բեռլինցիների մասին»։

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

